Ավետիք Իսահակյան

Բաղերը վայրի թռան շվարած

Բաղերը վայրի թռան շվարած. –
Ո՞վ է արշավում մռայլ գիշերով.
Մրրկի նման նժույգին նստած –
Ես եմ սլանում նիրհած դաշտերով:

Թռնիմ խոր երկինք, դեպ աստղերն անշեջ
Եվ սիրտս բանամ անհունության դեմ.
Ես սուզվել կուզեմ գոռ ամպերի մեջ
Եվ կայծակներով զարկըվել կուզեմ:
Գըծո՛ւծ ու նանիր մարդկանցից հեռո՞ւ,
Վախկո՛տ, նենգամի՛տ, կեղծ ու դավաճան,
Ստոր ու ստրուկ աշխարհից հեռո՞ւ,
Նյութին միշտ գերի, ագա՛հ ստության;

Աշխարհը չարժե քո արտասուքին,
Եվ կինն ու ընկեր՝ զգվանքիդ այդ ծով, -
Անապատ գնա՛ – սիրի՛ր վագրերին,
Եվ այրվիր անմահ արևի սիրով…

1905